

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4472

Ракенчуков Гео. Гео-  
механик пъзел


Земеджър

1324

3 KN  
N-11

ՊՈՒՍՏԱՏԱՆ  
ԿԱՄՈՒԼԻՍԱԿՇ  
ԿՈՒՍՎՎՈՒՐՅՇ  
[ ԲԱՅԼԵՎԵԿՆԵՐԻ ]

ՃՐԱԳԻՐԸ



17 SEP 2013

11 JUL 2005  
20 NOV 2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

12545

3 kn Dllgry  
D-11 Sprung

1c 5803 16x128

300

1401-81

uv

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացեք

三十六

ԱՐԵՎԱԿԱՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԿՈՒՆԱԿՑՈՒԹՅԱՆ (ԲԱՅԼԱԵՎԻԿԱՐԻ)

# ԾՐԱԳԻՐԸ

(Բնդունված կուսակց. 8-րդ համագումարում՝ 18—23-ին  
մարտի 1919 թ.)

## ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ



*s t r b q u i*

**S r b u s h   U n w \_ h G   s w l w r w G**  
**1 9 2 4**

10  
17-18

ԱՌԵՍԱՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈԽԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԹՅԱՆ (ԲԱՅԼՇԵՎԻԿԵՐԻ)

ԾՐԱԳԻՐԸ

(Բնդունված կուսակցության 8-րդ համագումարում 18—23-ի  
մարտի 1919 թ.)

Թուսաստանի Հռկտեմբերյան հեղափոխությունը  
(25-ին հոկտեմբերի, —7-ին նոյեմբերի 1917 թ.) իրա-  
գործեց պրոլետարիատի դիկտատուրան, վոր աղքատ  
գյուղացիության կամ կիսապրոլետարիատի ոգնու-  
թյամբ սկսել և ստեղծել կոմմունիստական հասարա-  
կության հիմքերը: Հեղափոխության զարգացման ըն-  
թացքը Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում,  
պրոլետարիատի հեղափոխական շարժման աճումը բո-  
լոր տուաջավոր յերկիրներում, այդ շարժման խորհըր-  
դային ձեի տարածումը, այսինքն այն ձեի, վորի ան-  
միջական նպատակն ե պրոլետարիատի դիկտատուրայի  
իրագործում՝ այս բոլորը ցույց տվեց, վոր սկսվել և  
համաշխարհային պրոլետարական, կոմմունիստական  
հեղափոխության դարաշրջանը:

Այդ հեղափոխությունն անխռուսափելի արդյունք  
եր կապիտալիզմի զարգացման, վոր տիրապետում և  
այժմ քաղաքակիրթ յերկիրների մեծ մասում,  
կապիտալիզմի և բուրժուական հասարակության  
բնույթը՝ մեր հին ծրագիրը ճշտորեն—յեթե չհաշվենք

կուսակցության անճիշտ սոցիալ-դեմոկրատական առունը, —վորոշել են հետեւյալ առաջազրությունների մեջ:

«Այդ հասարակության գլխավոր հատկանիշն եւ ապրանքների արտադրությունը՝ հիմնված կապիտալիստական այն արտադրական հարաբերությունների վրա, վորտեղ արտադրության միջոցների և ապրանքների շրջանառության ամենից կարևոր և նշանակալից մասը պատկանում է քանակով փոքրաթիվ մի դասակարգի. մինչդեռ պլոտետարիատը և կիսապրոլետարիատը, վորոնակության խոշոր մեծամասնությունն են կազմում, իրանց տնտեսական դրությամբ ստիպված են շարունակ կամ պարբերաբար վաճառել իրենց բանվորական ուժը, այսինքն կապիտալիստների վարձկան դառնալ և իրենց աշխատանքով հասարակության վերին դասակարգերի յեկամուտն ստեղծել:

«Կապիտալիստական արտադրական հարաբերությունների տիրապետության շրջանը միշտ ավելի և ավելի յենդլայնում, վորչափ տեխնիկայի մշտական կատարելագործումը՝ բարձրացնելով խոշոր ձեռնարկությունների տնտեսական նշանակությունը, դուրս և մղում մանր ինքնուրույն ձեռնարկողներին՝ նրանց մի մասին պլոտետար դարձնում, մնացածների գերը սահմանափակում հասարակական-տնտեսական կյանքում և տեղ-տեղ նրանց քիչ թե շատ լիակատար, քիչ թե շատ բացահայտ, քիչ թե շատ ծանր կախման մեջ դնում կապիտալից:

«Բացի այդ՝ նույն տեխնիկական պրոգրեսը հասարակորություն և տալիս ձեռնարկողներին միշտ ավելի սեծ չափերով կիրառել կանաց և յերեխաներէ աշխատանքն ապրանքների արտադրության և շրջա-

նառության պրոցեսում: Իսկ վորովհետեւ մյուս կողմից նա հարաբերաբար նվազեցնում է ձեռնարկողների բանվորական կենդանի ուժի կիրառելու կարիքը, բանվորական ուժի պահանջն անհրաժեշտաբար հետ և մնում նրա առաջարկից, վորի հետեւանքով աճում և վարձուու աշխատանքի կախումը կապիտալից և բարձրանում նրա շահագործման աստիճանը:

«Իրերի այսպիսի զրությունը բուրժուական յերկիրների ներսում և նրանց մշտապես սրվող փոխագործ մրցությունը համաշխարհային շուկայում՝ միշտ ավելի ու ավելի յենդվարացնում շարունակ աճող քանակով արտադրվող ապրանքների վաճառքը: Գերարտադրությունը, —վոր յերեան և գալիս քիչ թե շատ սուր արդյունաբերական կրիզիսների մեջ, վորոնց հետեւում են արդյունաբերության լճացման քիչ թե շատ տեսական շրջաններ, —ներկայանում և փորպետական հարաբերության լճացման քիչ թե շատ արդյունաբերության լճացման շրջաններն իրենց հերթին ավելի ևս կործանում են մանր արտադրողներին, ավելի ևս ուժեղացնում վարձու աշխատանքի կախումը կապիտալից, ավելի ևս արագացնում բանվոր դասակարգի դրության հարաբերական, իսկ յերեւմն ել բացարձակ վատթարացումը:

«Այսպիսով՝ տեխնիկայի կատարելագործումը, վոր աշխատանքի արտադրողականության ավելացումն ու հասարակական հարստության աճումն և նշանակում, բուրժուական հասարակության մեջ պայմանագորում և իր հետ հասարակական անհավասարության աճումը, ունեղորների և չունեղորների միջև յեղած

տարբերության մեծացումը և աշխատավոր մասսաների ել ավելի լայն խավերի համար ապրուստի անապահության, անգործության ու բազմատեսակ զըրկանքների շատացումը:

«Բայց բուրժուական հասարակությանը հատուկ այս բոլոր հակասությունների աճումին ու զարգացմանը համաչափ՝ աճում և նաև աշխատավոր և հարստահարվող մասսայի դժբռնությունը տիրող կարգերից, աճում և պրոլետարների թիվը ու համերաշխությունը և սրվում նրանց պայքարն իրենց հարստահարողների դեմ: Միևնույն ժամանակ տեխնիկայի կատարելազգործումը համակենտրոնացնելով արտադրության և շրջանառության միջոցները և համայնացնելով աշխատանքի պրոցեսը կապիտալիստական ձեռնարկությունների մեջ՝ ավելի և ավելի արագ նյութական հնարավորություն և ստեղծում կապիտալիստական արտադրական հարաբերությունները կոմմունիստականությունով փոխարինուելու, այսինքն՝ հնարավոր գարձնում այն սոցիալական հեղափոխությունը, վորչմիջազգային կոմմունիստական կուսակցության՝ վորչպես դաստկազմային շարժման դիտակից արտահայտիչ՝ ամբողջ գործունեյության վերջնական նպատակն է կազմում:

«Փոխարինություն արտադրության և շրջանառության միջոցների մասնավոր սեփականությունը հնարակականով և հասարակական-արտադրական պլույցի պլանաշափ կազմակերպություն մռնելով հասարակության բոլոր անդամների բարեկեցությունն ու լիակատար զարգացումն ապահովելու համար՝ պրոլետարիատի սոցիալական հեղափոխությունը կվայնացը:

Նի հասարակության դասակարգային բաժանումը և այլու կազմագրի ամբողջ ճնշված մարդկությունը, քանի վոր վերջ կդնի հասարակության մի մասը մյուսի միջոցով հարստահարելու բոլոր ձևերին:

«Սոցիալական այս հեղափոխության անհրաժեշտ պայմանը պրոլետարիատի դիկտատուրան և, այսինքն պրոլետարիատի ձեռքով քաղաքական մի այնպիսի իշխանություն նվաճելը, վոր հնարավորություն կտանրան ճնշելու հարստահարողների ամեն մի զիմադրություն: Խպատակ գնելով իրան ընդունակ դարձնել պրոլետարիատին իրավործելու պատմական իր մեծ միստիան՝ միջազգային կոմմունիստական կուսակցությունը կազմակերպում նրան վորպես բոլոր բուրժուական կուսակցություններին հակադիր քաղաքական ուրուցն կուսակցություն, զեկավարում նրա բովանդակ դասակարգային պայքարը, մերկացնում նրա առջև հարստահարողների և հարստահարվողների շահերի անհաշտ հակադրությունը և պարզաբանում նրան առաջիկա սոցիալական հեղափոխության պատմական նշանակությունն ու անհրաժեշտ պայմանները: Այսուհետեւ նա վեր և հանում բոլոր միացած աշխատավոր և հարստահարվող մասսաների առջև իրանց գրության անհուսալիությունը կապիտալիստական հասարակության մեջ և սոցիալական հեղափոխության անհրաժեշտությունը կապիտալի ճնշումից՝ իրանց ազատականությունը համար պահպան համար: Բանվոր դասակարգի կուսակցությունը՝ կոմմունիստական կուսակցությունը, զեկի իր շարքերն և կոչում աշխատող և հարստահարվող բնակչության բոլոր շերտերը, վորչափ նբանք պրոլետարիատի տեսակետն են յուրացնում»:

Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման պրոցեսը, վոչնչացնելով ազատ մրցումը՝ XX-րդ դարի սկզբին ստեղծեց կապիտալիստների հզոր մոնոպոլիստական միություններ, սինդիկատներ, արտելներ, տրեստներ,—վոր վճռական նշանակություն ըստացան ամբողջ տնտեսական կյանքում,—միախառնեց բանկային և ահագին չափերով համակենտրոնացած արդյունաբերական կապիտալը և զարկ տվեց կապիտալի ուժգին արտածությանը դեպի տարար յերկիրներ։ Տրեստները՝ ընդգրկելով կապիտալիստական պետությունների ամբողջ խմբեր՝ ձեռնարկեցին ամենահարուսա յերկիրների միջև տերրիտորիալ տեսակետից արդեն իսկ բաժանված աշխարհի տնտեսական վերաբաժանմանը։ Ֆինանսական կապիտալի այդ գարաջրջանը, վոր կապիտալիստական պետությանց միջև անխուսափելի մի պայքար ե սրում, իմպերիալիզմի գարաջրջանն ե։

Այստեղից անխուսափորեն բղիում են իմպերիալիստական պատերազմներ, պատերազմներ վաճառաշուկաների, կապիտալի գործադրության շրջանների, հում նյութերի և բանվորական ուժի համար, այսինքն՝ համաշխարհային տիրապետության և մանր ու թույլ ժողովրդներին իշխելու համար։ Հենց այդպիսի բնույթ ունի 1914—1918 թ.թ. առաջին մեծ իմպերալիստական պատերազմը։ Յեվ համաշխարհային կապիտալիզմի գարգացման բարձր աստիճանը, և ազատ մրցության փոխարինումը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմով, և արտադրության պրոցեսի ու պրոդուկտների բաշխումի հասարակական կարգավորման ապարատ ստեղծվելը բանկերի, այլև կապիտալիստ-

ների միությանց միջոցով, և՝ կապիտալիստական մենաշնորհների աճման հետ կապ ունեցող թանկության ու սինդիկատների աճող ձնշումը բանվոր զասակարգի վրա, սրա ճորտացումն իմպերիալիստական պետության միջոցով, պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարի ահագին դժվարությունը, և՝ իմպերիալիստական պատերազմի ծնած թշվառությունների արրափները, ավերածությունը, այս բոլորն անխուսակելի յեն գարձրել կապիտալիզմի կրախը և նրա փոխանցումը հանարակական տնտեսության ամենաբարձը տիպարին։

Իմպերիալիստական պատերազմը չեր կարող վերջանալ վոչ միայն արդար հաշտությամբ, այլև ընդհանրապես բուրժուական կառավարությունների միջև կնքած քիչ թե շատ կայուն խոսղաղության դաշնագրով։ Կապիտալիզմի գարգացման արդի աստիճանի վրա նա անխուսափողեն վերածվեց և վերածվում և մեր աչքի առաջ հարստահարվող աշխատավոր մասսաների և նրանց զլուխն անցած պրոլետարիատի քաղաքացիական պատերազմի՝ ընդեմ բուրժուազիայի։

Պրոլետարիատի աճող գրոհը և մանավանդ նրա հաղթություններն առանձին յերկիրներում, ուժեղացնում են հարստահարողների զիմազրությունը և առաջ բերում կապիտալիստների միջազգային միության նոր ձևեր (Ազգությանց լիգա և այլն)։ Համաշխարհային մասշտաբով կազմակերպելով յերկը բոլոր ժողովուրդների սիստեմատիկ հարստահարությունը՝ կապիտալիստներն իրենց մոտակա ձիգերը գործադրում են ըոլոր յերկիրներում պրոլետարիատի հեղափախական շարժումների անմիջական ճնշումի վրա։ Առանձին պե-

տությունների նկրսում այս բոլորն անխօւսափոքն  
միացնում ե քաղաքացիական կափվը թե պաշտպան-  
վող պրոլետարական յերկիրների և թե իմպերալիս-  
տական պետությունների ծի տակ ճնշված ժողովուրդ-  
ների հեղափոխուկան պատերազմների հետ:

Պայցիթիզմի, կապիտալիզմի տիրապետության ներքո միջազգային ապագինան, միջնորդ գալուստան-ների և այլն լողունգներն այս պայմաններում վոչ միայն ռեակցիոն ուժովիս յեն, այլև աշխատավորներին խարելու միջոց, վոր ձգտում էն ապագինել պրո-սետարիատին ու հետ կասեցնել նրան հարստահարող-ներին ապագինելու նպատակից:

Միայն պրոլետարական, կոմմունիստական հետափոխությունն և կարող հանել մարզկությանն իմաստերիալիզմի և իմացերիալիստական պատերազմների դժուգած անյել կացություննից։ Ինչ դժվարությունների ել հանգի հեղափոխությունը, ինչը ան ել հնարավոր լինեն նրա ժամանակավար անհաջողությունները՝ կամ հականեղափոխության հարվածները՝ պրոլետարիատի վերջնական հաղթությունն անխուսափելի յե-

Համաշխարհային պրոլետարական հեղափոռության այդ հաջողությունները պահանջում են առաջավոր յերկիրների բանվոր գասակարգի լիակատար վստահություններ, ամենասուերտ միություններ, հեղափոխական գործունեյության ըստ կարելույն մեծ համերաշխություն

Այդ պայմաններն անիբագործելի յեն, յիթէ  
սկզբունքորեն և վճռականապես չխցին կապերը և  
անխնա պայքար չմղի սոցիալիզմի այն բուրժուաց  
կան խեղաթյուրման հետ, զոր հազթանակել և պաշ  
տոնական սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական  
կուսակցությունների վերին շերտերում:

Այդպիսի խեղաթյուրուն և մի կողմից ոսպորտյունիկմի և սոցիալ-շովիճակիզմի—խոսքով՝ սոցիալիստական, գործով՝ շովիճական հոսանքը, սեփական ազգային բուրժուազիայի թալանչիական շահերի պաշտպանության քողարկումը հայրենիքի պաշտպանության կեզծ լոյզունգով, ինչպես առհասարակ, նույնպես և հատկապես 1914—1918 թ.թ. իմարերիալիստական պատերազմի ժամանակ։ Այդ հոսանքն ստեղծվել է շնորհիվ նրա, վոր առաջավոր կապիտալիստական պետությունները կողոպտելով գաղութային և թույլ ժողովուրդներին՝ հնարավորություն հն տալիս բուրժուազիային, այդ կողոպտափոյ ստացված հավելյալ շահի հաշվին արտօնյալ վիճակի մեջ դնելու և դրանով կաշառելու պրոլետարիատի վերին շերտերը, խաղաղ ժամանակներն ապահովելու նրանց տանելի քաղքենիական գոյությունը և ծառայության վերցնելու այդ շերտի գեկավարներին։ Ոպորտյունիստներն ու սոցիալ-շովիճակատներն սպասավորելով բուրժուազիային՝ պրոլետարիատի զասակարգային ուղղակի հակառակորդներն են, մանավանդ այժմ, յերբ նրանք կապիտալիստների հետ միացած, զինված ձեռքով ձընշում են պրոլետարիատի հեղափոխական շարժումը, ինչպես իրենց, նույնպես և ոտար յերկիրներում։

Մյուս կողմից, սոցիալիզմի բուրժուական խեղաթյուրումն և «կհնտրոնի» հոսանքը, վոր հավասարապես յերկան և գալիս բոլոր կապիտալիստական յերկիրներում. սա տատանվում և սոցիալ-շռվիճնիստների և կոմմունիստների միջև, միություն պահպանելով առաջինների հետ և փորձ անելով վերականգնել սնանկացած 2-րդ ինտերնացիոնալը: Պրոլետարիատի

զեկավարն իր աղատության համար մղվող պայքարում, նոր, 3-րդ կոմմունիստական Ինտելնացիոնալն ե, վորի գնդերից մեկն և Ռ.Կ.Կ.-ը: Այս Ինտելնացիոնալը փաստորեն ստեղծվել ե մի շարք յերկիրների և մասավանդ Գերմանիայի նախկին սոցիալիստական կուսակցությունների իսկապես պրոլետարական տարբերից կազմված կոմմունիստական կուսակցություններից, իսկ ձեւականորեն հիմնվել ե իր առաջին համագումարում՝ 1919 թ. մարտին Մուկվայում: Կոմմունիստական Ինտելնացիոնալը, վոր բոլոր յերկիրներում պրոլետարական մասսաների մեջ միշտ ավելի մեծ համակրանք ե գտնում, վոչ միայն իր անվամբ ե վերադառնուժ դեպի մարքուզմը, այլև իր ամբողջ իդեական-քաղաքական բովանդակությամբ, իր բոլոր գործողություններով իրագործում և Մարքսի հեղափոխական ուսմունքը՝ զտելով այն բուրժուական ոպորտյունիստական խեղաթյուրումներից:

Ավելի կոնկրետ կերպով զարգացնելով պրոլետարական դիկտուրայի նպատակները Ռուսաստանի վերաբերմամբ, վորի գլխավոր հատկանիշը բնակչության մանր-բուրժուական շերտերի թվական գերազանցությունն ե, Ռ.Կ.Կ.-ը հետեւյալ կերպով ե վորոշում այդ նպատակները.

### ՀՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ

1. Բուրժուական հանրապետությունը, անգամ ամենից դեմոկրատականը, վոր սրբագործում և համաժողովրդական, համազգային կամ ապադասակարգային կամքի լոգունգներով, անխուսափորեն յեղավարության և աշխատավորների ահագին

մեծամասնությունը մի բուռն կապիտալիստների միջոցով ձնշող մի մեքենա, շնորհիվ նրա, վոր գոյացություն ուներ հողի և արտադրության ուրիշ միջոցների մասնավոր սեփականություն, գոյություն ուներ բուրժուազիայի դիկտուրա: Դրան հակառակ պրոլետարական կամ Խորհրդային դեմոկրատիան ամբողջ պետական ապարատի տեղային և կենտրոնական, վարից-գեր, մշտական և միակ հիմքը գարձրեց հենց կապիտալիզմից ձնշաված դասակարգերի, պրոլետարների և ամենաաղքատ գյուղացիների, — կեսպրոլետարների, այսինքն բնակչության ահագին մեծամասնության մասսայական կազմակերպությունը:

Հենց գրանով Խորհրդային պետությունն իրագործեց, ի գեպ անհամեմատ ավելի լայն չափով, քան վորեւ այլ տեղ, տեղական և շրջանային ինքնավարությունը, առանց վերից նշանակված վորեւ գործավարության: Կուսակցության նպատակն և անդուր աշխատանքով իսկապէս և լիովին կենսագործել դեմոկրատիզմի այդ գերագույն տիպարը, վոր իր կանոնավոր գործառության համար մասսաների կուլտուրականության, կազմակերպվածության և ինքնազործության մակերեսույթի մշտական բարձրացում և պահանջում:

2)Հակառակ բուրժուական դեմոկրատիային, վոր թագցնումեր իր պետության դասակարգային բնույթը, Խորհրդային իշխանությունը բացորոշ խուստովանում և ամեն մի պետության անխուսափելի դասակարգային բնույթը, քանի չի չփացել բոլորովին հասարակության դասակարգային բաժանումը և դրա հետմիասին՝ ամեն մի պետական իշխանությունը Խորհրդ

գային պետությունը, իր խոկ հյությամբ նպատակ ունի ձնշել հարստահարողների դիմադրությունը, և Խորհրդային Սամհանագրությունը, չի վարանում զըրկել հարստահարողներին քաղաքական իրավունքներից՝ հիմք ընդունելով, վոր ամեն մի ազատություն խաբերայություն և, յիթե հակասում է աշխատանքի ազատազրմանը կապիտալի ճնշումից։ Անշեղ զլուխ բերելով հարստահարիչների դիմադրության ճնշումը և իդեալիս պայքարելով բուրժուական իրավունքների ու ազատությունների բացարձակ բնույթի վերաբերմամբ խորապես արմատացած նախապաշարմունքների դեմ՝ պրոլետարիատի կուսակցությունը ձգտելու յի միաժամանակ պարզաբանել, վոր քաղաքական իրավունքներից զրկելու ու ազատության յուրաքանչյուր սահմանափակում անհրժեշտ և միայն վորպես պայքարի ժամանակավոր միջոց՝ իրանց արտօնությունները պաշտպանելու կամ վերականգնելու դիտումով հարըստահարիչների ձեռնարկած փորձերի դեմ։ Այնքան, վորքան կանհետանս մարդը միջոցով հարստահարելու առարկայական հնարավորությունը, կանհետանս նաև այդ ժամանակավոր միջոցի անհրժեշտությունը և կուսակցությունը կձգտի սահմանափակել կամ լիովին վերացնել այդ։

3) Բուրժուական դեմոկրատիան սահմանափակվում եր ձևականորեն առածենական վրա քաղաքական իրավունքներ և ազատություններ, ինչպիսիք են ժողովների, միությունների, մամուլի իրավունքները։ Բայց իրոք բուրժուական գեմոկրատիայի ժամանակինչպես վարչական պրակտիկան, այնպես ել գիտավորապես աշխատավորների տըն-

տեսական սարկությունը շարունակ զրկում եր վերջիններիս այդ ազատություններն ու իրավունքները քիչ թե շատ լայնորեն ողափորձելու հնարավորությունից։

Ընդհակառակը, պրոլետարական դեմոկրատիան իրավունքների և ազատությունների ձևական հոչակման տեղը դնում է զրանց փաստական մատակարարումն, ամենից առաջ և ամենից շատ բնակչության հենց այն գոտուակարգերին, վոր ճնշվում ելին կապիտալիզմից։ այսինքն՝ պրոլետարիատին և զյուղացիությանը։ Դրա համար Խորհրդային իշխանությունը խլում է բուրժուազիայից շինություններ, ապարաններ և այն դնելով զրանց աշխատավորների ու նրանց կազմակերպությունների լիակատար տրամադրության տակ։

Ու, կ, կ, նպատակն է աշխատավոր բնակչության միշտ աւելի լայն մասսաներ զրավել դեմոկրատական իրավունքներից և ազատություններից ոգտելու համար և ընդլայնել սրա նյութական հնարավորությունը։

4) Բուրժուական դեմոկրատիան դարերի ընթացքում հայտարարել է մարդկանց իրավահասարություն՝ անկախ սեռից, կրօնից ռասայացից և ազգությունից, բայց կապիտալիզմը վոչ մի տեղ թույլ չի տվել փաստորեն իրավործել այդ իրավահավասարությունը, իսկ իր իմպերիալիստական աստիճանի վրա ռասայացական և ազգային ճնշումը սրել է ամենառուժեղ չափով։ Միայն շնորհիվ նրա, վոր Խորհրդային իշխանությունն աշխատավորների իշխանությունն և նա կարողացավ մինչև վերջը և կյանքի բոլոր ասպարեզներում, առաջին անգամ աշխարհում, զլուխ բերել այդ իրավահավասարությունը, մինչ կանանց անհավասարության

վերջին հետքերի վոչնչացումն ամուսնական և առնասարակ ընտանեկան իրավունքի շրջանում:

Ներկա մոմենտին կուսակցության նպատակն եղերազանցորդն իդեալան և դաստիարակչական աշխատանք տանել՝ նախկին անհավասարության ու կանխակալ համոզմունքների բոլոր հետքերը միանգամայն վոչնչացնելու մասնվանդ պրոլետարիատի և գյուղացիության հետամնաց շերտերի մեջ:

Չահմանափակվելով կանանց ձեական իրավահավասարությամբ՝ կուսակցությունը ձգտում է ազատագրել նրանց հնացած տնային տնտեսության նյութական ծանրությունից՝ փօխարինելով այն տնային կոմունաներով, հասարակական ճաշարաններով, կենտրոնական լվացարաններով, մանուկների ապաստարաններով և այլն:

5) Բուրժուական դեմոկրատիայից և պարլամենտարիզմից անհամեմատ ավելի շատ հնարավորությունը ընձեռելով աշխատավոր մասսաներին՝ պատվիրակների ընտրությունն կայացնելու և նրանց հետ կանչելու ամենահեշտ և բանվորներին ու գյուղացիներին մատչելի յեղանակով՝ Խորհրդային իշանությունը միտժամանակ վոչնչացնում է պարլամենտարիզմի բացասական կողմերը, մանավանդ որհնողիր և գործադիր իշխանությունների անջատումն իրարից, ներկայացուցչական ժողովների կտրվածությունը մասսաներից և այլն:

Խորհրդային պետությունը մոտեցնում է պետական ապարատը մասսաներին նաև նրանով, վորը ընտրական միավորը և պետության հիմնական բջիջը

կան միավորը (գործարան, ֆաբրիկա): Կուսակցության նպատակն այն է, վոր ամբողջ աշխատանքն այդ ուղղությամբ առաջ տանելով՝ իրակործվի իշխանության որդանների և աշխատավոր մասսաների ավելի սերտ մերձեցում՝ այդ մասսաների միջոցով դիմոկրատիզմի ավելի և լրիվ իրագործման հողի վրա, և առանձնապես պաշտոնատար անձանց պատասխանատվության և հաշվետվության յինթարկելու ձանապարհով:

6) Մինչդեռ բուրժուական դեմոկրատիան, չնայած իր գեկլարացիաներին, զորքը ունեոր գասակարգերի գործիք եր դարձնում, անջատելով այն աշխատավոր մասսաներից և հակազդելով այն դրանց, վոչնչացնելով քաղաքական իրավունքներ իրագործելու հնարավորությունը զինվորների համար, Խորհրդային պետությունը ձուլում է իր որգաններում, խորհուրդներում, բանվորներին և զինվորներին՝ նրանց լիակատար իրավահավասարության և շահերի միության հիմքերով։ Կուսակցության նպատակն է պաշտպանել ու զարգացնել բանվորների ու զինվորների այդ միությունը խորհուրդներում, անդացնելով զինված ուժի և պրոլետարիատի ու կիսապրոլետարիատի կազմակերպությունների անքակտելի կապը։

7) Ամբողջ հեղափոխության մեջ քաղաքային արդյունաբերական պրոլետարիատի՝ վորպես աշխատավոր մասսաների ամենից շատ համակենտրոնացած, միացած, լուսավորված և կոփված մասի՝ ղեկավար գերն արտահայտվել է ինչպես հենց խորհուրդների առաջացման մեջ, նույնպես և դրանց իշխանության որդաններ գտննալու ամբողջ ընթացքում։ Մեր հօրդային Սահմանադրությունն



այդ՝ արդյունաբերական պրոլետարիատին մի շարք արտօնություններ տալով՝ համեմատած գյուղի ավելի ցրիվ մասը-բուրժուական մասսաների հետ:

Ա. Կ. Կ. պարզաբանելով գյուղի սոցիալիստական կազմակերպության դժվարությունների հետ պատճականորեն կապված այդ արտօնությունների ժամանակավոր բնութը՝ պետք է ձգտի անշեղ ու սիստեմատիկորեն ոգտագործելու արդյունաբերական պրոլետարիատի այդ վրությունն այն նպատակով, վորպես զի հակառակ նեղ-համբարական և նեղ-արհեստական այն շահերին, վոր կապիտալիզմն եր անշենում բանվորների մեջ, առաջավոր բանվորների հետ ավելի սերտ շաղկապի գյուղական պրոլետարների ու կիսապլուստարների՝ այլև միջին գյուղացության մասնից հետամնաց և ցրիվ մասսաներին:

8) Միայն պետության խորհրդային կազմակերպության շնորհիվ և, վոր պրոլետարիատի հեղափոխությունը կարող եր միանդամից փշրել և հիմնիվեր կործանել պետության հին, բուրժուական, չինովնիկական և դատավորական ապարատը։ Սակայն լայն մասսաների վոչ բավականաչափ բարձր կուլտուրական մակերեսութը, մասսաների կողմից պատասխանատու գործի գրված աշխատավորների անհրաժեշտ վարչական փորձառությունների բացակայությունը, հին գպրոցի մասնագետներին ծանր պայմաններում արագությամբ գործի հրավիրելու անհրաժեշտությունն ու քաղաքային բանվորների ամենից զարգացած շերտերագվածությունը գինվորական գործերով՝ Խորհրդակային կազմի ներսում առաջ են բերել վերապարձ դեպքությունների մասսաների:

Ամենավճռական պայքար մղելով լյուրովը առաջիկ գեմ՝ Ռ. Կ. այդ չարիքի լիակատար հաղթահարժան համար դիմում և հետեւյալ միջոցներին.

1) Գործի գնել խորհրդի յուրաքանչյուր անդամին՝ պետական վարչության վորոշ աշխատանք կատարելու համար,

2) Հաջորդաբար փոխել այդ աշխատանքներն, այնպիս, վոր խորհրդի անդամներն աստիճանաբար քննդգրկեն վարչության բոլոր ճյուղերը,

3) Աստիճանաբար գործի գնել ամրող աշխատավոր բնակչությունը գլխովին՝ պետության վարչական աշխատանքի համար։

Բոլոր այս միջոցների լիակատար և բազմակողմանի գործադրությունը հաջորդ քայլը լինելով այն հանապարհի, վորի վրա վոտք և դրել Պարիզի Կոմմունան, և վարչության գործառնությանց պարզացումը, աշխատավորների կուլտուրական մակերեսութիւնը բարձրացնան հետ միասին, — տանում են դեպի պետական իշխանության վոչնչացումը։

Ա.Գ.Ա.Յին ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱԾՈՒԹՈՒՄ

9) Ազգային հարցում Ռ. Կ. Կ. դեկտվարվում և հետեւյալ առաջադրություններով.

1) Գերազույն ձգտումն է տարբեր ազգությանց պրոլետարիատի և կիսապլուստարների մերձեցման քաղաքականությունը՝ կալվածատերների և բուրժուազիայի տապալման նպատակով միատեղ հեղափոխական աշխատանք կատարելու համար։

2) Ճնշված յերկիրների աշխատավոր մասսաների անվատահությունը դեպի այդ յերկիրները ճնշած պե-

առությունների պրոլետարիատը հաղթահարելու նպաստակով՝ անհրաժեշտ և վոչնչացնել ամեն մի ազգային խմբակցության բոլոր և յուրաքանչյուր տեսակի արտօնությունը, ազգությանց լիակատար իրավահաշվասրություն, ճանաչել գաղութների և անիրավահաշվասր ազգությանց իրավունքը պետություններում:

3) Նույն նպատակով, վորպես լիակատար միության անցողական մի ձե՛ կուսակցությունը ձգտում է Խորհրդային տիպարով կազմակերպված պետությունների փերերատիվ միացման:

4) Այն հարցում, թե ովքեր են ազգային անջատման կամքի կրողները՝ Ռ. Կ. Կ. կանգնած և պատմական-դասակարգային տեսակետի վրա, հաշվի առնելով, թե իր զարգացման վեր աստիճանի վրա յե կանշնած տվյալ ազգությունը՝ միջնադարից գեպի բուժութական դեմոկրատիա, թե՝ բուժժութական դիմոկրատիան գեպի խորհրդային կամ պրոլետարտկան դեմոկրատիա տանող ճանապարհի վրա:

Համենայն գեպս այն ազգությանց պրոլետարների կողմից, վոր ճնշող ազգություններ են յեղեւպետք և առանձին զգուշություն և առանձին ուշադրություն գործ գրվի ճնշված և անիրավահաշվասր ազգությանց աշխատավոր ժամանակը հնավանդ ազգային զգացմունքների վերաբերմամբ: Միայն այդպիսի քաղաքականությամբ և հնարավոր պայմաններ ստեղծել միջազգային պրոլետարիատի իրական, ամուր, հոժարակամ միության համար, ինչպես այդ ցույց տվեց մի շարք ազգային Խորհրդային հանրապետությունների Խորհրդային Ռուսաստանի շուրջը միանալու փորձը:

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

10) Զինվորական բնագավառում կուսակցության նպատակները սահմանվում են հետեւյալ հիմնական առաջագրություններով.

1) Խմապերիալիզմի կազմալուծման և աճող քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում հնարավոր չե վոչ հին բանակը պահպանել, վոչ նորը կազմել, այսպիս կոչված, արտադասակարգային կամ համազգային հիմքերի վրա: Կարմիր Բանակը, վորպես պրոլետարական դիկտատուրայի գործիք՝ անհրաժետություն պետք և ունենա բացարձակ դասակարգային բնույթ, այսինքն՝ կազմվի բացառապիս պրոլետարիատից և սրան մոտիկ զյուղացիության պրոլետարական շերտերից: Միայն դասակարգերի վոչնչացումի քննիչացքումն ե, վոր նմանորինակ դասակարգային բանակը համաժողովրդական սոցիալիստական միլիցիա գդառնա:

2) Անհրաժեշտ և բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին լայնորեն սովորեցնել զինվորական գործը և համապատասխան առարկաների դասավանդությունն մացնել զպրոցում:

3) Կարմիր Բանակի զինվորական ուսուցման ու գաստիարակության գործը պետք և կատարվի դասակարգային միության և սոցիալիստական լուսավորության հիմունքով: Աւստի անհրաժեշտ են բարեհույս և անձնվեր կոմմունիստներից քաղաքական կոմիսարներ զինվորական առաջնորդներին կից, և կոմմունիստական բջիջների կազմակերպություն յուրաքանչյուր զորագանությունների ներքին իդեական կազ և զիտակից

գիսցիպլինա հաստատելու համար:

4) Հին բանակի կազմակերպությանը հակադիր, անհրաժեշտ ե՝ ըստ կարելույն կարճ ժամանակամիջոց զուտ կազմական ռւսուցման համար, կազմամաների մեջեցում զինվորական և զինվորա-քաղաքական զըստ-րոցների տիպարին, ըստ կարելույն մերտ կապ զինվորական կազմակերպությունների և ֆարբիկանների, գործարանների, արհեստակցական միությունների, աղքատ զյուղացիների կազմակերպությանց միջև:

5) Մատաղ հեղափոխական բանակի մեջ կարող է անհրաժեշտ կազմակերպչական կազմ ու կայունություն ստեղծվել զիտակից բանվորների ու զյուղացիների միջից յելած, առաջին նվազ թեկուզ ստորին, հրամանատարական կազմի միջոցով միայն: Ավել-ընդունակ ու յիռանդուն և սոցիալիզմի գործին նվիրված զինվորներին հրամանատարական պաշտոնների համար պատրաստելը, այդ պատճառով՝ բանակի ըստեղծման գործում ամենակարևոր ինսդիբներից մեջն և:

6) Անհրաժեշտ և ամենալայն կերպով ոգտագործել նաև վերջին համաշխարհային սրատերազմի ոսկերածիվ և տեխնիկական փորձը: Դրան կից, անհրաժեշտ է բանակի կազմակերպության և նրա ոպերատիվ զեկավարության համար լայն չափերով գործոնել հին բանակի գորոցն անցած զինվորական մասնագետներին: Իր հերթին, այդպիսի գործակցության անհրաժեշտ պայմանն ե բանակի քաղաքական զեկավարության և հրամանատարական կազմի լիակատար վերահսկողության կենտրոնացումը բանվոր դաստիարակի ձեռքուժ:

7) Հրամանատարական կազմի ընտրականու-

թյան պահանջը, վոր ահազին սկզբունքային նշանակություն ուներ բուրժուական բանակի վերաբերմամբ, վորակ հրամանատարական կազմն ընտրվում էր և դաստիարակվում վորակու զինվորների և զինվորների միջոցով՝ աշխատավոր մասսաների դաստիարակային հաղատակեցման ապարատ, միանգամայն կորցնում և իր սկզբունքային նշանակությունը՝ դաստիարակային բանվորական կարմիր բանակի վերաբերմամբ: Ընտրականության և նշանակովիության հնարավոր կոմբինացիան հեղափոխական դաստիարակային բանակին թելազրվում և բացառապես գործնական նկատառությունվ և կափած և զորակազմության մակերեսութից, զորամասերի կապակցության աստիճանից, հրամանատարական կազմերի կազմից և այլն:

#### ԴԱՏԱՍՑԱՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

11) Իր ձեռքն առնելով ամբողջ իշխանությունը և առանց մնացորդի վերացնելով բուրժուական տիրապետության որգանները՝ նախկին կազմի դատարանները՝ պրոլետարական գեմոկրատիան բուրժուական գեմոկրատիայի «գատավորների ընտրականությունը ժողովրդի միջոցով» բանաձեի փոխարեն առաջ և քաշել «գատավորների ընտրականությունն աշխատավորներից և միայն աշխատավորների միջոցով» դաստիարակային լոգունդը և այն կիրառել դատարանի կազմակերպության մեջ, այդու հավասարեցնելով յերկու սեռերի բոլոր իրավունքները, ինչպիս դատավորների ընտրությունն, նույնպիս և դատավորների պարտականություններ կատարելու նկատմամբ:

Պրոլետարիատի և աղքատ գյուղացիության աշմենադաշտ մասսաներին՝ արդարադատության գործին մասնակից անելու համար՝ դատարանի մեջ մտցված ե մշտապես փոխարինվող ժամանակավոր դատավորատենակալների մասնակցությունը՝ վերապահելով դրանց ցուցակագրությունը՝ մասսայական բանվորական կազմակերպություններին, արհեստակցուկան միություններին և այլն:

Նախկին տարբեր կազմի և բազմաթիվ ինստանցիաներ ունեցող դատարանների անվերջ շարանի փոխարեն միասնական ժողովրդական դատարան ստեղծելով՝ Խորհրդային իշխանությունը պարզ ձեւ և տվել դատակազմության՝ նրան բացարձակապես մատչելի դարձնելով բնակչությանը և վերացնելով գործավարության ամեն տեսակի քաշքառմները:

Վերացնելով տապալված կառավարությունների որենքները՝ Խորհրդային իշխանությունը հանձնարարել և Խորհուրդների ընտրած դատավորներին իրագործել պլրոլետարիատի կամքը, գործադրելով նրագեկրետները, իսկ այդպիսիների բացակայության կամ թերի լինելու դեպքում՝ դեկավարվել սոցիալիստական իրավահասկացորդությամբ:

Պատժի բնագալառում՝ այսպես կազմակերպված դատարաններն արդեն իսկ արմատապես փոխել են պատժի բնույթը՝ լայն չափերով իրագործելով պայմանական դատավարություն, հասարակական դատավարությունը կիրառելով վորպես պատժի միջոց, վերածելով բանտարկությունը պարտադիր աշխատանքի՝ աշտառության վերապահումով, փոխարինելով բանտերը կրթական հաստատություններով և հսարավորություն

տալով գործադրելու ընկերական դատարանների պրակտիկան:

Ո.Կ.Կ., հետամուտ լինելով դատարանի ապագա դարձացմանն այդ իսկ ուղղությամբ, պետք է ձգտի՝ դատավորական պարտականությունների կատարման համար գործի դնել ամբողջ աշխատավոր բնակչությունը գլխովին և պատիժների սխսեմը վերջնապես փոխարինել դատիքարակչական բնույթ կրող միջոցների սխսեմով:

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾԱՌՈՒՄ

12) Ժողովրդական լուսավորության բնագավառում Ո.Կ.Կ. նովատակ և զնում իրան վերջացնել 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխության սկսած գործը՝ դպրոցը բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքից գարձնել հասարակության դասակարգային բաժանումի լիակատար վոչնչացումի գործիք, հասարակության կոմմունիստական վերապատճենական իրավահասկացորդությամբ:

Պոլիտարիատի դիկտատուրայի վըջանում, այսինքն կոմմունիզմի լիակատար իրազործումը հնարավոր դարձնող պայմանների նախապատրաստության շրջանում, դպրոցը վոչ միայն պետք է տարածի կոմմունիզմի սկզբունքներն ընդհանրապես, այլ և տարածի պլրոլետարիատի իդեալական, կազմակերպչական, կրթական ազգեցությունն աշխատավոր մասսաների կիսապրոլետարական և վոչ-պլրոլետարական խավերի վրա՝ նպատակ ունենալով կոմմունիզմը վերջնապես հաստատելու ընդունակ սերունդ դատիքարակել: Այդ

ձանապարհի վըս ներկայիս մոտավոր նպատակն է Խորհրդային իշխանության արդեն հաստատած դպրոցական ու լուսավորական գործի հետեւալ հիմքերի առաջիկա զարգացումը.

1) Զրի և պարտադիր, ընդհանուր և պոլիտեխնիկական (տեսականորեն և գործնականորեն արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին ծանոթացնող) կրթություն յերկու սեռերի բոլոր յերեխաների համար մինչև 17 տարեկանը:

